



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Մասնագիտական կողմնորոշումը
տեխնոլոգիա առարկայի մեջ

Առարկան՝ Տեխնոլոգիա

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդան Հարությունի Վարդանյան

Ուսումնական հաստատություն՝ Մրգաշենի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն-----	3
2. Մասնագիտական կողմնորոշումը տեխնոլոգիա առարկայի մեջ -----	5
ԳԼՈՒԽ 1 , Մասնագիտական կողմնորոշում-----	5
3. ԳԼՈՒԽ 2 , Մասնագիտական կողմնորոշում և տեխնոլոգիա -----	11
4. ԳԼՈՒԽ 3 , Տեխնոլոգիա առարկայից դասապրոցեսի կազմակերպում -----	12
5. Եզրակացություն -----	20
6. Գրականության ցանկ -----	21

Ներածություն

Մասնագիտական կողմնորոշումը գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական, հոգեբանամանկավարժական, բժշկաֆիզիոլոգիական գործընթաց է, որը կոչված է նպաստելու անձի մասնագիտության գիտակցված ընտրությանը և կարիերայի պլանավորմանը՝ բացահայտելով և զարգացնելով վերջիններիս հետաքրքրությունները ու հակումները, ինչպես նաև ձևավորելու ազատ շուկայական պայմաններում աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք:

Մասնագիտական կողմնորոշման խնդիրն է «Աջակցել անձի նախասիրություններին ու աշխատաշուկային համապատասխան մասնագիտության ընտրության հարցում»:

Դեպքերի մեծամասնությունում մասնագիտության ներքո հասկանում են մարդուն լիարժեք գոյատևելու և զարգացնելու հնարավորություն տվող ֆիզիկական և հոգևոր ուժերի գործադրման հասարակության համար անհրաժեշտ և սահամանափակ աշխատանքի բաժանում (ման):

Մոտ հիզ հարյուր մասնագիտություն ամեն տարի անհետանում է և մոտավորապես այդքան էլ նորերն են առաջանում: Դրանցից որոշները լրջորեն փոխվում են իրենց բովանդանդակությամբ: Այդ պատճառով յուրաքանչյուրն այսօր միշտ պետք է պատրաստ լինի վերապատրաստվելու կրկին որակաորվելու և իր մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները թարմացնելու:

21-րդ դարում մասնագիտություն ընտրելու խնդիրը նոր հնչեղություն և արդիականություն է ձեռք բերել: Հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է՝

Առաջին՝ մի կողմից նոր սոցիալ -տնտեսական փորձը դեռևս լիովին յուրացված չէ, իսկ նոր մասնագիտությունները դեռ վերջնականորեն չեն ամրապնդվել հասարակական գիտակցությունում, մյուս կողմից մենք մասնագիտությունների մասնագիտացումների ավանդական ձևերի կարծրատիպերը կոտրելու բարդ ու ցավազին գործընթացի վկաններն ենք: Եթե նախկինում ընդունված էր մասնագիտական կողմնորոշման հարցում ընդօրինակել ծնողներին, ապա այժմ իրավիճակը կտրուկ փոխվել է, և տեղեկատվական նորագույն միջոցների շնորհիվ երիտասարդ սերունդը ավելի

համակողմանի պատկերացում ունի հեռանկարային ու անհեռանկարային մասնագիտությունների և դրանց սոցիալական կարգավիճակի հնարավոր փոփոխությունների մասին:

Երկրորդ՝ ներկայիս պայմաններում, երբ մասնագիտությունները դարձել են առավել դինամիկ և փոփոխական արդեն բավարար չէ միակ-եզակի մասնագիտության տիրապետելը: Ներկայիս պայմաններում պահանջված են այն մասնագետները, ովքեր տիրապետում են մի քանի բարդ մասնագիտությունների և ունակ են հաջողությամբ գործունեություն ծավալելու:

Մասնագիտական ընտրության շեմին կանգնած մարդիկ հիմնականում շրջանավարտները տարբերվում են շրջապատող աշխարհի պահանջներին համապատասխան իրենց հնարավորությունները գնահատելու և իրենց ճանաչելու ձգտմամբ, և մասնագիտական կողնորոշում առարկան պետք է օգնի ճիշտ ընտրելու մասնագիտությունը, քանի որ մասնագիտության ճիշտ ընտրությունով է պայմանավորված հետագա մասնագիտական կյանքի հաջողությունը, աշխատավայրում լիարժեքության, բավարարվածության և ներդաշնակության զգացումը:

ԳԼՈՒԽ1

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Կրթության առջև ծառայած հիմնական խնդիրներից են անձի իմացական և պրոֆեսիոնալ ապահովումը, մյուս կողմից՝ հասարակության մտավոր և մասնագիտական ներուժի ձևավորումն ու համադրումը, նշված խնդիրներին հնարավորինս լուծելու միջոց է հանդես գալիս մասնագիտական կողմնորոշումը:

Մասնագիտական ուղղորդումը դադարում հաճախ դառնում է մասնագիտական ինքնորոշման առաջին փորձը: Դեռահասը փորձում է պարզել, թե ապագայում գործունեության որ ուղղությունը կապահովի իրեն և՛ կայուն եկամուտ, և՛ բավարարվածություն:

Մասնագիտական ուղղորդման մեթոդներն ու նպատակները տարբերվում են՝ կախված անձի տարիքից:

Նախադպրոցական տարիքի երեխաների կարիերայի ուղղորդումը տեղի է ունենում խաղի ձևաչափով և արդեն իրականացվում է մանկապարտեզում: Փոքր երեխաները սովորում են տարբերել մասնագիտությունները, որոշել դրանց էությունը, նրանք ունեն իրենց առաջին նախասիրությունները: Նրանք ընտրում են, թե ինչ են ուզում դառնալ, երբ մեծանան՝ ուսուցիչ, հրշեջ, ոստիկան, ինժեներ և այլն: Խաղալիքները դառնում են մասնագիտությունը «սովորելու» գործիք:

Երեխան նմանակում է մեծերին՝ խանութում պատկերելով վաճառողի կամ հիվանդանոցում բժշկի: Իհարկե, երեխաների մեծ մասն ի վերջո ընտրում է բոլորովին այլ մասնագիտական ուղի, բայց ուսուցման գործընթացն ինքնին շատ օգտակար է զարգացման համար:

1.1 Դեռահասների մասնագիտական ուղղորդումը սկսվում է դպրոցի ութերորդ կամ իններորդ դասարանից: Սովորաբար դա սահմանափակվում է բավականին մակերեսային հաղորդակցությամբ հոգեբանի հետ, ով թեստավորում է անցկացնում, կամ էքսկուրսիաներ ձեռնարկություններում, որոնք բավարար ըմբռնում չեն տալիս որոշակի մասնագիտության աշխատանքի էությանը:

Այսպիսով մասնագիտական կողմնորոշումը սոցիալ-տնտեսական, հոգեբանամանկավարժական, բժշկակենսաբանական և արտադրատեխնիկական ծրագրավորված միջոցառումների համակարգ է, որը նպաստում է ՏԵՍ-կոնցեպցիայի՝ ձևավորմանը և նպատակ ունի հանրակրթական դպրոցի շրջանավարտներին օգնելու գիտակցաբար ընտրելու իրեն համապատասխան և հարմար մասնագիտություն՝ ելնելով իրենց հոգեկան, ֆիզիկական առանձնահատկություններից, աշխատաշուկայի պահանջարկից: Պլատոնը դեռ իր դարաշրջանում գրել է. «Ամեն առանձին անհատ պետք է զբաղվի այնպիսի մի բանով, ինչը պետք է պետությանը, և միևնույն ժամանակ նրանով, ինչին նա իր ամբողջ էությամբ ամենաշատն է համապատասխանում»:

1.2 Մասնագիտություն ընտրելիս, նախ և առաջ՝ անհրաժեշտ է , որ յուրաքանչյուր ոք հասկանա, թե՝ որպես անձ, ինչպես է վերաբերվում կյանքին: Մասնագետը պետք է փորձի սկսել երեխաների ինքնաճանաչումից դրան գալով պատասխանելով հետևյալ հարցերին՝

1. Ո՞վ եմ ես:
2. Որո՞նք են իմ դրական և բացասական գծերը:
3. Ո՞րն է իմ ապրելու կարգախոսը:
4. Ո՞րն է իմ առաքելությունը:
5. Ինչպիսի՞ մարդ եմ ես:
6. Ինչո՞վ եմ ուզում զբաղվել:
7. Ինչո՞վ չեմ ցանկանա ընդհանրապես զբաղվել:
8. Ո՞րն է հասարակության ամենակարևոր շարժիչ ուժը:

Գրավոր պատասխանելով հետևյալ հարցերին՝ մասնագետը կունենա յուրաքանչյուրի անձնային բնութագիրը, որը ևս մեկ անգամ ընթերցելիս

յուրաքանչյուրը կճանաչի ինքն իրեն, թե ինչպիսի մարդ է, հանուն ինչի է ապրում, որ արժեքներն են կարևոր, ելնելով այդ կարևոր արժեքներից՝ ինչով կցանկանա զբաղվել, և հասարակական կյանքն առաջ տանող որ ոլորտում կինքնաիրականացվի:

Այս ամենը վերլուծելով և հստակեցնելով՝ հաջորդ քայլը սեփական նպատակների, դրանց իրականացման ուղիների, ուղիների արդյունավետության, դրանց իրականացման հնարավորության, օբյեկտիվության գնահատման և, վերջապես, արդյունքների սխեմատիկ շարադրումն է: Նման մոտեցումը ստեղծում է այն ամենի պատկերը, ինչը կցանկանան իրականացնել՝ որպես հասարակության լիիրավ անդամ: Պատկերային սխեման ստանալու համար պետք է պատասխանել հետևյալ հարցերին՝

1. Ի՞նչ եմ ուզում դառնալ:
2. Ինչո՞ւ հենց այդ ոլորտը:
3. Ո՞րն է իմ նպատակը:
4. Նախնական քայլերը նպատակին հասնելու համար:
5. Ինչպե՞ս կարող եմ դրանք իրականացնել:
6. Ինչի՞ց սկսել:
7. Նախնական երեք իրատեսական քայլերը:
8. Մոտավոր պատկերացում սեփական անելիքների և մասնագիտական ոլորտի ընտրության վերաբերյալ:

Նման մոտեցումը ոչ մի ոլորտի ընտրություն չի պարտադրում: Ընդհակառակը, այն հնարավորություն է տալիս, որպեսզի ինքնաճանաչման և սեփական վերաբերմունքի՝ ու կյանքին ուղղված պահանջների շնորհիվ կատարվի ինքնուրույն ընտրություն՝ ունենալ ինքնակողմնորոշված մասնագիտություն Աշակերտներին պետք ուսուցանվի, որ ինչ մասնագիտություն էլ նրանք ընտրեն, միշտ պետք է ունենան լիարժեքության, օգտակարության և երջանկության զգացում: Հակառակ դեպքում՝ այն կարելի է համարել ոչ օբյեկտիվ և նյութական:

1.3 Մասնագիտական կողմնորոշման նպատակով անհրաժեշտ է աշակերտներին տալ նախնական տեղեկատվություն, որն իր հերթին ենթադրում է մի շարք առանձնացված հարցերի իմացություն.

1.3.1 Ի՞նչ է մասնագիտությունը.

Դեպքերի մեծամասնությունում մասնագիտության ներքո հասկանում են մարդուն լիարժեք գոյատևելու ու զարգանալու հնարավորություն սվող ֆիզիկական ու հոգևոր ուժերի գործադրման հասարակության համար անհրաժեշտ և սահմանափակված բնագավառ, իր հերթին մասնագիտության ներքո հնարավոր է հասկանալ աշխատանքների բնագավառների տարատեսակություն՝ մասնագիտությունների սահմաններում:

Օրինակ դժվար է գտնել Տբժիշկ՝ ընդհանրապես, կա թերապևտ, ակնաբույժ, վիրաբույժ, ատամնաբույժ և այլ:

1.3.2 Ինչպիսի՞ մասնագիտություններ են լինում:

Մասնագետների կարծիքով կախված աշխատանքի առարկայից բոլոր մասնագիտությունները ստորաբաժանվում են հետևյալ հինգ տեսակների:

-ՄԱՐԴ - ԲՆՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություններն են՝ սերմնաբույծ, գյուղատնտես, կինոլոգ, քիմիական-մանրէբանական վերլուծության լաբորանտ:

Տարդ-բնություն՝ տեսակի մասնագիտությունների մեջ առանձնացվում են այնպիսի մասնագիտությունները, որոնց աշխատանքի առարկան բուսական և կենդանական օրգանիզմներն են, և պետք է հաշվի առնել, որ աշխատանքի կենսաբանական օբյեկտները բարդ են, փոփոխական և ոչ միօրինակ և, որ նրանք աճում են, զարգանում, ինչպես նաև հիվանդանում և մահանում: Աշխատողին պետք է ոչ միայն շատ բան իմանալ կենդանի օրգանիզմների մասին, այլև կանխատեսել հնարավոր փոփոխությունները: Մարդուց պահանջվում է՝ հոգատարություն, հեռատեսություն, նախաձեռնություն և ինքնուրույնություն կոնկրետ աշխատանքային խնդիրներ լուծելիս:

-ՄԱՐԴ-ՏԵԽՆԻԿԱ

Այստեղ աշխատանքի գլխավոր առարկան տեխնիկական օբյեկտներն են (մեքենաները, մեխանիզմները), նյութերը և էներգիայի տեսակները:

Մասնագիտություններն են՝ լեռնագործ բանվոր, ատաղծագործ (հյուսն), մետաղագործ-տեխնիկ, ճարտարապետ, ինժեներ-մեխանիկ, ռադիոմեխանիկ և այլն:

Տեխնիկական միջոցները մշակելիս ձևավորելիս, գնահատելիս աշխատողից պահանջվում է գործողությունների որոշակիություն և ճշգրտություն: Քանի որ տեխնիկական միջոցները ստեղծվում են մարդու կողմից ուստի մեծ են հնարավորությունները տեխնիկական ստեղծագործության, մտորումների և նոր արտադրության համար: Գործի հաղեպ ստեղծագործական մոտեցման հետ մեկտեղ տեխնիկայի բնագավառում մարդուց պահանջվում է բարձր կատարողական կարգապահություն:

-ՄԱՐԴ-ՄԱՐԴ

Այստեղ աշխատանքի գլխավոր, գերակա առարկան մարդիկ են:

Մասնագիտություններն են՝ բժիշկ ուսուցիչ, հոգեբան, վարսավիր, էքսկուրսավար, մենեջեր և այլն:

Այս տեսակի մասնագիտություններով հաջող աշխատելու համար պետք սովորել շփումներ հաստատել ու պահպանել մարդկանց հետ, հասկանալ նրանց, պարզել յուրաքանչյուրի որպես անձ առանձնահատկությունները, ինչպես նաև տիրապետել արվեստի, գիտության և արտադրության համապատասխան գիտելիքների

-ՄԱՐԴ-ՆՇԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այստեղ աշխատանքի գլխավոր առարկան պայմանական նշաններն են, թվերը, ծածկագրերը, բնական և արհեստական լեզուները:

Մասնագիտություններն են թարգմանիչ, քարտեզագրող, ինժեներ, տեղանքագիր, ծրագրավորող և այլն:

-ՄԱՐԴ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐ:

Աշխատանքի գլխավոր առարկան այստեղ գեղարվեստական կերպարն ու դրա կառուցման ձևերն են:

Մասնագիտություններն են՝ դերասան, երաժիշտ, նկարիչ, դիզայներ, քանդակագործ, գրականագետ և այլն:

:

1.4 Կախված աշխատանքի միջոցներից մասնագիտությունները տարանջատվում են 4 խմբի.

1. **Ձեռքի** աշխատանքի օգտագործման հետ կապված մասնագիտություններ (հյուսն, ոսկերիչ, աստղծագործ, բժիշկ և այլն)
2. Ձեռքի կառավարման մեքենաների օգտագործման հետ կապված մասնագիտություններ (խառատ, վարորդ, մեքենավար, կապի օպերատոր և այլն)
3. Ռոբոտատեխնիկական համալիրների, ինքնավարների, ինքնավար համակարգերի, կիսաինքնավարների օգտագործման հետ կապված մասնագիտություններ (պողպատագործ, էներգոհամակարգի դիսպետչեր, տպագրիչ, ապարատավար)
4. Աշխատանքի գործիքների, գործառնական միջոցների օգտագործման հետ կապված մասնագիտություններ (մանկավարժ, դերասան, ռեժիսոր, մարզիկ, դիրիժոր)

1.5 Աշխատանքի նպատակից կախված առանձնացվում են մասնագիտությունների երեք դաս.

1. Գնոստիկական՝ ճանաչել, տարբերակել, գնահատել, ստուգել (սանիտարական բժիշկ, գրական քննադատ, քննիչ, վերահսկիչ, փորձագետ, ապրանքագետ)
2. Փոխակերպող՝ մշակել, տեղակայել, կազմակերպել, ձևափոխել (վարորդ, գեղանկարիչ, մանկավարժ, հատակագործ, խառատ, դերձակ)
3. Հետախուզական՝ ձեռք բերել, մտածել, կառուցել (նկարիչ-ձևավորող, ձևող վարպետ, նշագծող)

Ներկայացնենք մասնագիտությունների հիմնական դասակարգումը աղյուսակային տեսքով.

Աշխատանքի առարկան	Բնություն	Տեխնիկա	Մարդ	Նշան	Գեղարվեստական կերպար
Աշխատանքի պայմանները	Կենցաղային	Բացօթյա	Անսովոր	Բարձր բարոյական պատասխանատվությամբ	

Աշխատանքի միջոցները	Ձեռքի	Մեքենաներ	Ավտոմատացված	Գործառնական	
Աշխատանքի նպատակները		Փոխակերպվող	Հետախուզական		

1.6 Մասնագիտություն ընտրելու հայտնի բանաձև իրենից ներկայացնում է երեք՝ §Ուզում եմ!, §Կարող եմ!, §Պետք է! չափանիշների զուգակցում:

1.7 Մասնագիտական կողմնորոշման հիմքում ընկած են հետևյալ գործոնները՝

1.7.1 Մասնագիտական ախտորոշում

- դեռահասի, երիտասարդի անհատականության ուսումնասիրում, անձնային որակների ու դրանցից բխող մասնագիտական հակումների բացահայտում՝ թեստավորման, հարցազրույցի, դիտարկման մեթոդներով,

1.7.2 Տեղեկատվության տրամադրում

- մասնագիտական ուսումնական հաստատություններ (արհեստագործական ուսումնարաններ, քոլեջներ, բուհեր, հետբուհական) ընդունվելու հնարավորությունների ու պայմանների մասին,
- մասնագիտությունների ու զբաղմունքների մասին,
- հանրապետության, նաև առանձին մարզերի աշխատաշուկայի վերլուծության մասին,
- գործատուի կողմից աշխատողին ներկայացվող պահանջների մասին,
- աշխատանք փնտրելու հնարավորությունների և եղանակների մասին,

1.7.3 Մասնագիտական խորհրդատվության տրամադրում

- աշակերտի կամ երիտասարդի ունակություններին և հակումներին համապատասխան մասնագիտական հետաքրքրությունների ձևավորում,
- մասնագիտությունների և զբաղմունքների բացահայտում՝ մասնագետների, փորձագետների հետ հանդիպումների միջոցով,

1.7.4 Մասնագիտական համակերպում

- այցելություններ մասնագիտական ուսումնական հաստատություններ (արտադրական ուսուցմամբ հանրակրթական դպրոցներ, արհեստագործական ուսումնարաններ, քոլեջներ, բուհեր), ծանոթացում մասնագիտության ուսուցման գործընթացին,
- այցելություններ արտադրական ձեռնարկություններ և հիմնարկներ, աշխատանքային պրակտիկայի կազմակերպում:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Մասնագիտական կողմնորոշման ունակությունների ձևավորումը հանդիսանում է Տեխնոլոգիա՝ առարկայի խնդիրներից:

Տեխնոլոգիա՝ առարկայի հիմնական գաղափարները կառուցվում են 5 հիմնական դրույթների վրա.

1. Գրաֆիկա
2. Նյութեր և կառուցվածքներ
3. Գործընթացներ և արտադրություն
4. Ձեռնարկատիրություն
5. Տեխնոլոգիա և կյանք

Տեխնոլոգիա՝ առարկայի հիմնական նպատակը սովորողներին ինքնուրույն աշխատանքային կյանքին նպատակաուղղելն է, կիրթ, ստեղծագործող, նախաձեռնող ակտիվ քաղաքացի դաստիարակելը:

Առարկայի շրջանակներում սովորողները զինվում են անհրաժեշտ տեխնիկատեխնոլոգիական գիտելիքներով և ունակություններով, ապահովելով անձնային և ազգային լավագույն ավանդույթների պահպանման և զարգացման գործը: Տեխնոլոգիան ճանաչողական գիտություն է , որն ուղղված է մարդու գործունեության բարեփոխման, գիտելիքների համակարգման, գործունեության օպտիմալացմանն ու արդյունքների զարգացմանը: Այն նաև ուղղորդող և ուսուցանող ոլորտ է որտեղ ինտեգրվում են մյուս հանրակրթական առարկաներից ստացված գիտելիքները, գործնականում կիրառելով դրանք:

Մասնագիտական ընտրությունը մասնագիտական կայացման բարդ, երկարատև, շարժուն ու հասարակական գործընթացիմիայն սկիզբն է և մասնագիտական մտադրությունների ծագման և ձևավորման նպատակով երեխան առաջին դասարանից պետք է ինքնահատատվի, հասկանա՝ ի՞նչ է մասնագիտությունը, ի՞նչ է մասնագիտության գիտակցված ընտրությունը:

ԳԼՈՒԽ 3

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅԻՑ ԴԱՍԱՊՐՈՑԵՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Սովորելու գործընթացը հնարավոր դարձնելը կախված է աշակերտների ուշադրությունը գրավելուց.

Սովորելը հնարավոր դարձնելու 1-ին քայլը ուշադրության կենտրոնացումն է, երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողություն: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են:

Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը հիմնականում կախված է այն քանից, թե գիտելիքների ինչ պաշար ունի աշակերտը, գիտելիքների պաշարը պահեստավորված է երկարատև հիշողությունում:

Ուսումնառության գործընթացի կազմակերպման հիմքում դրված են աշակերտին մոտիվացումը, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելը: Քանի որ յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է, ուստի անհրաժեշտ է ուսուցման մեթոդները և հնարները ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Դասապրոցեսը բաժանում ենք 3 մասի և յուրաքանչյուր մասի համար առաջարկում ենք մեթոդներ և հնարներ.

1. Դասի սկիզբ
2. Նոր նյութի բացատրություն
3. Սովորածը պարզելու հնարներ

3.1 ԴԱՍԻ ՍԿԻԶԲ ԵՎ ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը, առաջին թույլներից է մարդը (աշակերտը) որոշում դիմացինին լսել թե ոչ, եթե ուսուցչին հաջողվում է դասի առաջին թույլներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դասի արդյունավետ ընթացքն ապահովված է:

Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ.

3.1.1 Խորհրդատվություն.

Երեխաները սիրում են գաղտնիքներ, դրանց առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են թույլ առաջ բացահայտել գաղտնիքները: Երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ կերպ՝

Տես մտքումս բան եմ պահել, որը վերաբերվում է մեր ուսումնասիրած թեմաներից մեկին և ուսումնասիրվելիք նյութին: Դուք պետք է ինձ հարցեր տաք և ես կարող եմ այդ հարցերին պատասխանել միայն Տայո՛ կամ Տոչ՛ տարբերակով: Իսկ դուք Ձեր հարցերը պետք է ձևակերպեք այնպես, որ Տայո՛ կամ Տոչ՛ պատասխանները օգնեն ձեզ հասկանալ թե ինչ եմ պահել մտքումս:

3.1.2 Գուշակություն.

Սովորողների հետաքրքարությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական հասկացությունները կամ վերնագիրը առանձին-առանձին գրել թեթրիկների վրա և պահել դասասենյակի տարբեր տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել աշակերտներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը:

Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը: Օրինակ՝ կարող ենք առանձին թղթերի վրա գրել Տուրվագծել՛, Տմկրատ՛, Տներկել՛, Տթուղթ՛, Տսոսնձել՛: Բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը:

Պատասխանը՝ ապլիկացիա:

Այնուհետև առաջարկում ենք աշակերտներին գործնական աշխատանք ՏՍյուժետային ապլիկացիա՛ վերնագրով:

Ներկայացնենք դասի ընթացքը.

Դասարան

Երրորդ

Թեման

Երկրաչափական պատկերներ << Ճուտիկ>>՛

Նպատակը, խնդիրները

Ամրապնդել մատիտով, մկրատով, սոսնձով աշխատելու ունակությունը:

Դաստիարակել սեր դեպի աշխատանքը:

Կահավորում

Շաբլոններ, մկրատ, սոսինձ, գունավոր թղթեր, ալբումի թուղթ, տարբեր երկրաչափական պատկերներով ճուտիկներ:

Բառային աշխատանք

Բառեր, եզրույթներ, (ապլիկացիա, խճանկար, գծանշել, կտրահանել, կաղապար)

1. Դասի սկիզբը.

Ողջունել

Դասի նախապատրաստական մաս:

2. Նոր նյութի հաղորդում

Նախնական գրույց

Օրինակ`

- Երեխաներ հիմա հանելուկի միջոցով կգուշակեք թե ով է եկել մեզ հյուր.

Դեղին եմ և կլորիկ

Միրունիկ, փափկամազիկ

3. Գործնական աշխատանք

-Իսկ հիմա սկսում ենք աշխատել

-Երեխաներ աշխատում ենք իմ հրահանգներին համապատասխան.

-Ուշադիր կտրի՛ր շրջանակները:

-Ճիշտ փոխանցիր մկրատը

-Դետալը զգուշորեն սոսնձիր:

-Թուղթը գծանշի՛ր խնայողաբար:

Ներկայացնում ենք հանելուկներ օգտագործվող գործիքների վերաբերյալ:

Երկու եղբայր երկվորյակ,

Ամեն գլխին մի օղակ.

Երկու մարմին մի բերան,

Ինչ որ տեսան զարմացան: (մկրատ)

Առանց ասեղ ,առանց մեխ

Ամրացնում եմ ես Ձեզ

Թե փորձես դուն ինձ պոկել,

Կտոր-կտոր կլինես: (սոսինձ)

Մի փայտիկ եմ գեղեցիկ,

Գլխիս ունեմ փունջ մազիկ: (վրձին)

և այլն:

4. Ֆիզկուլտ դադար;

Հնարավորության դեպքում ուղեկցվում է երաժշտությամբ կամ վարժությունները կատարելիս աշակերտները արտասանում են.

Թող լինի միշտ արևը (բարձրացնում են աջ ձեռքը)

Թող լինի միշտ երկինքը (բարձրացնում են երկու ձեռքերը)

Թող լինի միշտ մայրիկը (բարձրացնում են ձախ ձեռքը)

Եվ թող միշտ լինեմ ես (բարձրացնում են երկու ձեռքերը)

Վարժությունները մարմնաշարժողական են, աշխույժ և ուրախ:

3.1.3 Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը, հետևաբար դասի հազեցվածությունը անսպասելի բարդություններով շատ կարևոր է:

Վերևում ներկայացված հանելուկների պատասխանները ստանալուց հետո անսպասելի կարելի ներկայացնել հարցադրումներ

Օրինակ՝


Ինչ կլինեի եթե չստեղծվեր մկրատը, չհայտաբերվեր թղթի արտադրությունը և նմնատիպ այլ հարցադրումներ: Շատ կարևոր է նաև նյութում օգտագործվող պարագաների վերաբերյալ սկզբնաղբյուրների օգտագործումը, որը տալիս է նախագիտելիք և ստեղծում աշխատանքային տրամադրություն:


Երեխաներին տրամադրելու նպատակով կարելի է նաև դասի թեման հայտնելուց հետո գրատախտակին պատկերել սխեմա և դիմել աշակերտներին թե տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտները ինչ պատկերացում ունեն ,ապա լրացնել սխեման.

Լրացնում ենք սխեմայի 1-ին և 2-րդ սյունակները, անցնում ենք նոր նյութի բացատրությանը այս դեքպում արդեն վերևում բերված մեր օրինակի վրա (հավելված 2)

Կարելի է կազմակերպել քննարկում միմյանց միջև ընդհանրացված գրույցի կարգով, ինպես նաև այդ ընթացքում առաջարկել, որ աշակերտները նշեն մի քանի առաջարկներ, (հավելված 1):

Այնուհետև լրացնում հավելված 2-ում ներկայացված սխեմայի 3-րդ սյունակը





Ներկայացվում է դասի արդյունքը՝

- Կատարած աշխատանքների ցուցադրում և ներկայացում
- Կատարված աշխատանքի և ներկայացման վերլուծություն,
- Աշխատանքների գնահատում:

Դասապրոցեսի ընթացքում կարևոր է դպրոցականների ակտիվացումը և ուշագրավ է մասնագիտական խաղերի ներդրումը:

§ Խաղ! հասկացությունը բավկլանին նարդ ու բազմազան է, հաճախ ենք հանդիպում այսպիսի արտայատության, որ խաղը աշխատանքի զավակն է, որը անհրաժեշտաբար նախորդում է դրան ժամանակի մեջ: Ինքը § Խաղ! բառը հաճախ ունի ոչ միանշանակ երանգներ ու իմաստներ: Խաղը հնուց գրավել է մտածողների ուշադրությունը, ինչն իր

արտահայտումն է գտել բազմաթիվ խաղերի տեսություններում և դրա հանդեպ հայացքներում՝ խաղը, որպես հաճույք, որպես ցածրագույն ընդունակությունների արտահայտում, որպես \$վարժանք՝ պատրաստություն ավելի կարևոր գործերին, որպես հակումների դրսևորում, որպես կողմնորոշման գործունեության հասկացմանը մոտ շրջապատող աշխարհի յուրացման միջոց, ինչպես նաև մարդու (աշակերտի) զարգացման և նրա ինքնաբացահայտման պայման:

Բերենք մի քանի օրինակներ.

1. \$Ստաժոր-այլ մոլորակայիններ՝ խաղը նախատեսված է արդյունաբերական ձեռնարկության կառուցվածքի և հիմնական արտադրության մասնագիտությունների պահանջների հետ դպրոցականներին ծանոթացնելու համար:
2. \$Զուգորդումներ՝ խաղը նախատեսված է տարբեր մասնագիտությունների մասին դպրոցականների պատկերացումները, դրանց հանդեպ նրանց ունեցած ընդհանուր և հուզական վերաբերմունքը դուրս բերելու և շտկելու համար:
3. \$Գուշակիր մասնագիտությունը՝ խաղում դպրոցականներին հաղորդակից է դարձվում աշխատանքի տարբեր տեսակների գիտական վերլուծությանը:

Իսկ այժմ վերադառնանք մասնագիտություն ընտրելու լավագույն բանաձևին՝ \$Ուզում եմ!, \$Կարող եմ!, \$Պետք է!.

-Ուզում եմ՝ ցանկությունների, նպատակների, հետաքրքրությունների, ձգտումների տարածքն է,

-Կարող եմ՝ ընդունակությունների, տաղանդի, առողջական վիճակի տարածքն է,

-Պետք է՝ աշխատաշուկայի պահանջարկի, տարածաշրջանի սոցիալ-տնտեսական խնդիրների, համաշխարհային տնտեսության զարգացման միտումների տարածքն է :

Այս բանաձևը դիտարկենք որպես հեքիաթի վերնագիր և առաջարկենք աշակերտներին դրամատիկորեն խաղարկել մասնագիտությունների ընտրության երեք բաղադրիչները (ուզում եմ, կարող եմ, պետք է):

Հրահանգելով հեքիաթի սկիզբը (հեքիաթի հերոսին ընտրում են աշակերտները),

Ճանապարհով գնում է հերոսը և հանդիպում մի քարի որի վրա գրված է \$Ձախ գնաս կգտնես այն ինչ ուզում ես!, \$Ուղիղ գնաս կգտնես այն ինչ կարող ես!, \$Աջ գնաս կգտնես այն ինչ պետք է!:

Կարելի դասարանը բաժանել մի քանի խմբերի և յուրաքանչյուր խումբ պետք ներկայացնի սցենարի շարունակության իր կողմից ստեղծված տարբերակը, սցենարների խաղարկումից հետո սկսում ենք քննարկել:

Դպրոցում մասնագիտական կողմնորոշման մեջ ստեղծագործական մոտեցման և վառ գրավիչ ձևերի կիրառումը հնարավորություն կտա աշակերտների

մոտ ձևավորելու մասնագիտական աշխատանքային գործունեության նկատմամբ հետաքրքրություն, դրա գեղեցկության և նպատակահարմարության, դրական ազդեցություն անձնական զարգացման և հողևոր տեսքի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կողմնորոշման համակարգի հիմնական նպատակն է անձի հետաքրքրություններին, կարիքներին և առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայում որակավորված և մրցունակ կադրերի պահանջարկին առավել համապատասխանող գործունեության ազատ և գիտակից ընտրության հնարավորության ստեղծումը ելնելով հետևյալ դրույթներից.

1. Մշտապես փոփոխվող իրավիճակներում անձի ինքնուրույն կողմնորոշվելու կարողությունների ձևավորում:
2. Մասնագիտական կողմնորոշման ենթակա անձի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, հակումների, հետաքրքրությունների և շարժառիթների բացահայտում:
3. Մասնագիտության գիտակցված ընտրություն:

Մասնագիտության գիտակցված ընտրության կազմակերպմանը հանգեցնում է հիմնական դպրոցում տեխնոլոգիա առարկայի ուսումնառությունը, որի նպատակն է ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումը, նրան ինքնուրույն կյանքի նախապատրաստումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ: Սահակ Հովհաննիսյան
2. Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ դասընթացի ծրագիր: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, մանկավարժության նիջֆակուլտետային ամբիոն:
3. Ուսուցման արդյունավետ հնարներ: Ս. Խաչատրյան